

ՌՈՐԵՐԻ ԱՔԱՅԱՆ

ԿՈՄԻՏԱՍՅԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ ԹՈՐՈՍ ԱԶԱՏՅԱՆԻ ԱՐԽԻՎՈՒՄ

(Կոմիտասի՝ 1913-ին ձայնագրած ժողովրդական երգերի 2-րդ ծոցատետրը)

Կոմիտասի ծննդյան 60-ամյակի նշումը Սովետական Հայաստանում և այդ առթիվ նրա մասին Հայպետհրատի կողմից հուշերի ժողովածուի հրապարակումը (կազմող՝ Ռ. Թերլեմեզյան) ժամանակին լայն արձագանք էին գտել Խորհրդային Հայաստանի մեջ: Շատ տեղեր, իսկ առանձնապես շքեղ՝ Փարիզում (1930) և Կ. Պոլսում (1931) Հայաստանի օրինակով կատարվեցին հանդեսներ, կազմակերպվեցին համերգներ, լույս ընծայվեցին կոմիտասյան հրատարակություններ և Կոմիտասի մասին հոգվածներ:

Փարիզում գործում էր դեռևս 1919-ին հիմնված «Կոմիտասյան խնամատար հանձնաժողովը», որի առավել եռանդուն մասնակիցներն էին Արշակ Զուպանյանը, օր. Մարգարիտ Բաբայանը, Աստվածատուր Հարենցը և ուրիշներ. բարտուղարն էր Կոմիտասի հինգ սաներից մեկը՝ Պոլսի «Գուսան» երգչախմբի մշտական 1-ին մենբերգիչ Հայկ Սեմերջյանը, իսկ երաժշտական հրատարակությունները՝ Կոմիտասի անտիպ մնացած գործերի խմբագիրն ու տպագրության պատրաստողը՝ նույն հինգ սաներից մի երկրորդը՝ կոմպոզիտոր Վարդան Սարգսյանը: Պոլսում, ուր առանձնահատուկ պայմանների հետևանքով Կոմիտաս անունը միառժամանակ լուսնային էր մատնվել, կազմակերպվեց «Կոմիտասի օր» կոչվող գործունյա հանձնախումբը, որի անդամներն էին Կոմիտասի նախկին սաներ կամ համակիրներ՝ Վարդան Ակգյուլյանը (նույնպես «Գուսան» երգչախմբի մենբերգիչներից, — նախագահ), Դուրդեն էլմասյանը (բարտուղար), Հայկազ Վարդանյանը, Հրանտ Աճեմյանը, Գեղամ Պապիկյանը և ուրիշներ, պատվակալ անդամ էր Թորոս Ազատյանը:

Երկարատև և լուրջ նախապատրաստումից հետո Կոմիտասի օրը Պոլսում նշվեց 1931 թ. նոյեմբերի 27-ին: Բերայի Ս. Նրրորդության եկեղեցում պատրիարք Նարոյանի նախագահությամբ տեղի ունեցավ հանդիսավոր պատարագ, Պոլսի զանազան երգչախմբերի 85 լավագույն երգիչներից հատկապես կազմված արական խումբը էդգար Մանասի ղեկավարությամբ կատարեց Կոմիտասի «Պատարագը», թերթերում գրվեցին հոգվածներ: Հանձնախումբը, Հայկազ Վարդանյանի նախաձեռնությամբ, պատվիրեց Թ. Ազատյանին գրել Կոմիտասի կյանքին ու գործին նվիրված մի գիրք:

Պոլսահայ ծանոթ գրական-հասարակական գործիչ և մանկավարժ Թորոս Ազատյանը դարձավ Կոմիտասի նվիրված պրոպագանդիստը. հոգվածներ գրեց, շուտով լույս տեսավ նաև «Կոմիտաս վարդապետ. առաջին հատոր. իր կյանքն ու գործունեությունը»:

Իր գիրքը գրելու համար Թ. Ազատյանը մի շարք դիմումներ է անում և

հավաքում է Պոլսում, Կոմիտասի աշակերտների, բարեկամների կամ այլ անձանց մոտ մնացած՝ Կոմիտասի ձեռագրերը, լուսանկարները, նամակները, ղանազան թերթերում տարբեր ժամանակ տպագրված հոդվածները: Հավաքված նյութերը հնարավորություն են ստեղծում կազմել Կոմիտասի կյանքի և գործունեության բավական մանրամասն ու հետաքրքրական նկարագրություններ, որը և հմտությամբ իրականացնում է Ազատյանը: Դիրքը մեծ դեր է կատարում արտասահմանի հայության մեջ Կոմիտասի ստեղծագործությունը պրոպագանդելու, նրա հիշատակը վառ պահելու համար:

Դեռևս այդ գիրքը կազմելու ընթացքում, հավաքված նյութերի առատության հետևանքով, միտք է ծագում անմիջապես կազմել և շուտով մամուլին հանձնել մի նոր աշխատություն՝ նույն գրքի 2-րդ հատորը, որը, ըստ 1-ին հատորի ծանուցման, պետք է բովանդակեր Կոմիտասի «գրչի արտագրությունները՝ հայ գեղջուկ երաժշտության նվիրված և զանազան թերթերում ու պարբերականներում մեջ լույս ընծայված ուսումնասիրությունները, ձայնագրած կրոնական և աշխարհիկ երգերը, բոլորովին անտիպ գեղջուկ երգեր, նոր ձայնագրություններ՝ հայ և եվրոպական խաղերով, դասախոսական նոթեր և մտածումի փշրանքներ»: Այդ մտագրությունը, սակայն, զուիս չի գալիս, երևի նոտաներ տպագրելու մասնավոր դժվարությունների պատճառով: 1936-ին Նզիա Փեչիկյանին ուղղված նամակում Թ. Ազատյանը գրել է. «Կոմիտաս վարդապետի անտիպներն ու նոթաները, որոցմով Բ հատոր մը պիտի կազմեի, ուղարկեցի ժամանակին Փարիզ և Երևան» («Բազմավեպ», 1936, № 5): Կարևոր է նաև շարունակությունը. «Քովս վարդապետի միայն ձեռագիր անտիպ մը (Կոմիտաս վարդապետի ինքնագիր տաղերը պարունակող), որպես գրականության վերաբերող ժառանգություն մը, զոր մտագիր եմ առանձինն հրատարակել հարմար առիթով: Ահա, այգ քնարական տաղերն են մեկն է, զոր ներփակ կդրկեմ «Բազմավեպի» համար... Հայկական խաղերով փոփոխ երգի կտոր մըն ալ կմիացնեմ (անտիպ ըլլալու է անշուշտ)»¹: Ե. Փեչիկյանը Կոմիտասյան երկու հատվածն էլ լուսանկար տպագրում է «Բազմավեպում»:

1939-ին, Կոմիտասի ծննդյան 70-ամյակի առթիվ, Թ. Ազատյանը Պոլսում մի գեղեցիկ գրքույկով, իր ներածությամբ ու խմբագրությամբ հրատարակում է Կոմիտասի քնարերգությունները:

Առժամանակ հրաժարվելով «Կոմիտաս» գրքի Բ հատորը տպագրելու գաղափարից, Ազատյանն հետագայում կրկին անդրադառնում է նույն խնդրին, մտադրվելով մնացած և հավաքած նոր նյութերից կազմել մի ավելի ընդարձակ հատոր: Այսպես, նրա արխիվում այժմ գտնվող թղթերից (66ա, էջ 1) իմանում ենք, որ նոր գիրքը, որ պետք է լույս տեսներ Կոմիտասի մահվան 20-ամյակին, բաղկացած պիտի լիներ 4 բաժնից և բովանդակեր՝

Ներածություն՝ ինքնակենսագրություն.

Ա մաս՝ երաժշտագիտական. տպագրված հոդվածները.

Բ մաս՝ նամակներ և տողիկներ.

1. Խրիմյան Հայրիկին, 1895 (տե՛ս «Էջմիածին», 1947, № 5—6).

2. Մարդարիտ Բաբայանին, 1905—1912 (տե՛ս «Մշակույթ», 1935, № 3—4).

¹ Նշողությունը մերն է—Թ. Ա.

3. Սիրանուշին, 1909.

4. Ս. Ակայանին, 1910.

5. Ե. Հակոբյանին.

6. Քարտեր և տողիկներ.

Ի մաս՝ երաժշտական պատաստիկներ և անտիպ նշխարներ.

Ի մաս՝ քնարերգություններ:

Այս երկրորդ մտադրությունն էլ չի իրականացել, թերևս այս անգամ էլ այն պատճառով, որ նախատեսված ժողովածուի էական մասն առանձին լույս էր ընծայվել. քնարերգությունները 1939-ին՝ Պոլսում, իսկ երաժշտագիտական հոդվածները մի ամփոփ ժողովածուով՝ 1941-ին, Երևանում (Ք. Ազատյանը այս ժողովածուի մասին կարող էր ուշ տեղեկացած լինել) և այլն:

Բազմաշխատ բանասերի մահից հետո նրա հարուստ արխիվը ուղարկվում է Երևան²: Արխիվի թղթերի մեջ մի առանձին կապոց են Կոմիտասին վերաբերող այն նյութերը, որոնք պետք է կազմեին «Կոմիտաս» Բ գործի բովանդակությունը: Այդ կապոցը պարունակում է մի շարք անտիպ բնագրեր և բավական տպագրված նյութեր: Ստորև ընդհանուր ձևով տալիս ենք նրա բովանդակությունը:

1. Հայ բանաստեղծների (սովետական և արտասահմանյան) տպագրված ոտանավորները Կոմիտասի մասին:

2. Կոմիտասի մասին նրա գործունեության տարիներին գրված տարբեր հեղինակների հոդվածները հայկական մամուլից, հավաքված իր՝ Կոմիտասի կողմից, մեծ մասամբ իր սեփական մակագրություններով:

3. Մամուլում՝ ավելի ուշ տպագրված հոդվածներ, նաև հուշեր, նամակներ:

4. «Կոմիտասը հայ և օտար մամուլի մեջ» թերի բիբլիոգրաֆիական տեղեկատու, Ք. Ազատյանի կազմած:

5. «Կոմիտաս վարդապետի քնարերգությունները» գրքի համար Ք. Ազատյանի մեքենագիր ներածականը և նրա մի մեքենագիր հոդվածը՝ «Թնչպես պատրաստեցի Կոմիտաս վարդապետի կենսագրության հատորը»:

6. Երաժշտադետ Ռուբեն Թևրլեմեզյանի նամակը Ք. Ազատյանին, նրա ուղարկած՝ Կոմիտասի ձեռագրերը ստանալու մասին: Թուրքական երաժշտադետ Մահմուդ Ռազիբի երկու նամակը Ք. Ազատյանին, վերջինիս «Կոմիտաս» գրքի թուրքերեն թարգմանությունը հրատարակելու դժվարությունների, անհնարինության մասին: Թուրք բանաստեղծ Մեհմեդ էմինի գրվածականը (մեքենագիր թուրքերեն և թարգմանված հայերենի) Կոմիտասի մասին, նրա մահվան տխուր առիթով գրված:

7. Կոմիտասի զանազան լուսանկարները:

8. Բանաստեղծ Վահան Միրաքյանի բնագիր անտիպ նամակը Կոմիտասին:

Բուն Կոմիտասյան բնագրերի մեջ, չհաշված վերը հիշված Կոմիտասի մակագրությունները կրող տպագիր հոդվածները, կան՝

2 Քորոս Ազատյանի արխիվի ուղարկումը (1957 թ.) նրա այրի՝ հարգելի տիկ. Շուշանիկ Ազատյանի հայրենասիրական նախաձեռնությունն էր:

9. Քնարերգությունների սևագիր տետրը, որից Ազատյանը կատարել է տպագրությունը:

10. Հավանաբար ամբողջությունից պոկված մեկ թերթիկ՝ խաղաբանության վերաբերող, մեկ թերթիկ հարմոնիայի՝ Կոմիտասի կազմած դասագրքի:

11. «Հավիկ մի սլայծառ» տաղի և «Համեմատ քեզ ոչ ու նման» հոգևոր երգի ձայնագրությունները հայկական ձայնանիշներով:

12. «Էջմիածնա վանքի սրներ» (որ նույնն է, թե «Քեղի մեռնիմ, էջմիածին») ժողովրդական երգի խմբական մշակման անավարտ ուրվագծեր, «Փայտե ձիուկ» մանկական երգը, «Հովն անուշ» ժողովրդական երգի խոսքերի վերամշակումը:

13. Կոմիտասի ձայնագրած ժողովրդական երգերի ծոցատետրը:

Կոմիտասի երաժշտական, երաժշտագիտական և գրական ժառանգությունը հայերի նման և հայերի հետ ողջ աշխարհով մեկ ցրիվ է եկել: Թեև շատ բան է հավաքված, բայց դեռ շատ ու շատ բան է պակասում: Այդ է պատճառը, որ կոմիտասյան ամեն մի առանձին թերթիկն անգամ, երբ վերստին հայտնաբերվում, երկրներ անցնելով «տուն է վերադառնում» և նրա դիվանում իր թափուր մնացած տեղն է գրավում, անկեղծ ուրախություն է պատճառում բոլորին: Այդպես էլ թված բնագրերը: «Կոմիտասյան նշխարներ» լինելու հանգամանքը չէ միայն դրանց արժեքը, դրանց մեջ կան գործնական շոշափելի շահեկանություն ունեցող նյութեր: Այդ նյութերը հայտնաբերելու, պահպանելու և վերջի վերջո տեղ հասցնելու համար չի կարելի երախտապարտ չլինել հանգուցյալ բանասեր Թ. Ազատյանին, որն, ինչպես կարելի էր նկատել, Կոմիտասի ժառանգության պահպանման համար ընդհանուր առմամբ զգալի գործ է կատարել:

Ստորև այդ նյութերից մի քանիսը հակիրճ կրնոթագրենք և առավել կարևորները կհրապարակենք:

* * *

«Ինչպես պատրաստեցի Կոմիտաս վարդապետի կենսագրության հատորը» հոգվածում Թ. Ազատյանը գրում է, թե Կոմիտասն իր մասին հայկական թերթերում լույս տեսած հոգվածների կտրոնները համախմբած է եղել մի կապուցում, որի վրա գրած է եղել՝ «Կենսագրությանս համար»: Դրանք 39 հատ են, 29-ի վրա կան իր մականգրությունները՝ հոգվածի տպագրման թվականը, վայրը, թերթի անունը և այլն: Անշուշտ, սրանք բոլորը չեն, ինչ որ երաժշտագետի գործունեության տարիներին նրա մասին գրվել է: Կոմիտասը միշտ գործով տարված, չէր հասցնում հավաքել հայ և օտար մամուլում իր մասին երևացող հոգվածները: Բնորոշ է 1914-ին գրված իր նամակներից մեկի հետևյալ հատվածը, որտեղ խոսելով Փարիզում, Միջազգային երաժշտական ընկերության համաժողովի ընթացքում իր տված հայ հոգևոր համերգի մասին, որը «ըստ լրագրաց» Համաժողովի համար կազմված համերգներեն ընտրելագույններեն մեկն եղավ», ավելացնում է. «Այնքան զբաղված եմ, որ նույնիսկ ժամանակ չունեցա ժողովելու մեր երաժշտության մասին գրվածքները թերթերեն, մեկին խնդրել էի, այն ևս ականջի տակովն էր ձգել ու ունի չէր արել»³:

3 1914, հոկտեմբեր 22-ի նամակը Արմինե Մելիքյանին (անտիպ).

Այս հավաքածուի մեջ համեմատաբար առատ են այն հոդվածները, որ վերաբերում են նույն 1914-ին գրամաֆոնի պնակների վրա հայկական հոգևոր հրգեր ձայնագրելու առթիվ այն տխմար պայքարին, որ Պոլսի մի քանի տիրացուները բորբոքեցին Կոմիտասի դեմ: Բանն այնտեղ էր հասել, որ Պոլսի Կրոնական ժողովը հրապարակով դիմել էր Պատրիարքին, որպեսզի վերջինս Կոմիտասի հարցը քննելու համար դիմում անի Կաթողիկոսին: Ապշեցուցիչ է, որ այդ անսկզբունք պայքարն սկսվեց, բորբոքվեց և Կոմիտասի դեմ ու ի պաշտպանություն նրա հոգվածները դրվեցին հենց այն օրերին. երբ մեծ երաժշտագետը մեծ հաջողությամբ իր երեք զեկուցումներն էր կարդում վերը հիշված Միջազգային երաժշտական ընկերության համաժողովին: Նա դեռ չէր հասցրել Պոլիս վերադառնալ և անձամբ ու մանրամասնորեն պատմել հայ երաժշտության գտած մեծ ընդունելության մասին: Համաժողովն ավարտվելուց հետո նա Փարիզում դեռ զբաղված էր արդյունքների հետ կապված կազմակերպական հարցերով, աշխատում էր ժողովրդական երաժշտության կոմիտեում, որի անդամ էր ընտրված⁴: Մինչդեռ պոլսահայ մամուլում, ինչպես ասում են՝ «կյանքը եռում էր», դեմ և թեր հոգվածները, միայն Աղասյանի արխիվում հավաքված նյութերից դատելով, երևան եկան՝ հունիսի 6—10-ը ամեն օր, հունիսի 14, 24, 25-ին, հուլիսի 4, 7, 9, 10-ին... Հիրավի, կարծես պոլսահայերին էլ ուրիշ անելիք չէր մնացել, բոլորը զբաղված էին «գրամաֆոնի խնդրով» Կոմիտասի նյարդերը քայքայելով:

Հայ առաջադեմ մտավորականությունն, իհարկե, պաշտպան կանգնեց Կոմիտասին. կարևոր են տարբեր օրեր երևան եկած՝ Փ. Թերլեմեզյանի և Տ. Չոկյուրյանի «Կրոնական ժողովի որոշումը» բողոք-հոգվածը («Բյուզանդիոն», 7/20 հունիս), Ա. Չոպանյանի «Անկրոն որոշում մը» ընդարձակ հոգվածը («Բյուզանդիոն», 24 և 25 հունիս (7 և 8 հուլիս) և մանավանդ Ե. Օտյանի՝ արտաքուստ զուսպ, բայց ներքուստ բավական խիստ և կծու ֆելիետոնը, տպագրված «Ժամանակ» թերթում, հուլիս 9/22-ին, Կոմիտասի Փարիզից Պոլիս վերադառնալու օրը: Այդ հոգվածները մեզանում քիչ հայտնի են, ուստի առիթից օգտվելով, այստեղ բերում ենք դրանցից գոնե մեկը:

Անհաբկի իրաբանցման մը արդյունք

Մեր Պատկառելի Կրոնական Ժողովին հապճեպ և անխորհուրդ որոշումը հանկարծ պատկառելիութենեն ծիծաղելիության վերածվեցավ:

Հայտնի է, որ Ժողովում ֆոնոգրաֆներու փլաքներու առթիվ դատապարտված էր Կոմիտաս վարդապետը և Ս. Պատրիարք. Հոր հանձնած էր այս մասին Վեհափառ Հայրապետին ուղարկությունը հրավիրել:

Կրոնական Ժողովը սլարդապես զոհ գնացեր է մեկ քանի ողորմելի դպրապետներու, որոնց երաժշտագիտության աստիճանը կերևա որ թույլ չի տար Կոմիտաս վարդապետի ձայնը ճշմարտության ձայնեն դանաղանելու:

4 «Թեև Համաժողովը լրացավ,—գրում է Կոմիտասը,—բայց ընտրվեցա ժողովրդական բաժնի այն Մասնաժողովի շորս անդամներն մեկ, որո պարտականությունն է մեկ միատեսակ ծրագիր մշակել՝ առհասարակ ժողովրդական երաժշտությունն ուսումնասիրելու և այնպես, որ բոլորը կարենան օգտվիլ՝ առանց դժվարությանց: Առայժմ այդ գործով եմ զբաղվում» (վերջ հիշված նույն նամակից):

Հիմա Ս. Պատրիարք Հայր պիտի ճշդն եղեր թե Կոմիտաս վարդապետը եկեղեցական ո՞ր արականները երգած է կամ երգողը ո՞վ է և թե այդ տեսակ բան մը երգելը ո՞ր աստիճան հանցավոր կրնե հեղինակ եկեղեցականը:

Այսպես ուրեմն դեռ նույնիսկ հայտնի չէ, թե գործած արարքը հանցանք մըն է թե ոչ: Այս պարագային ուրեմն ի՞նչպես Կրոնական ժողովը կելլի Կոմիտաս վարդապետը դատապարտելու, պատրիարք ու կաթողիկոս իրար անցնելու:

Կրոնական ժողովը փոխանակ մեկ քանի շահախնդիր դարձաներու խոսքին հավատալու և անոնց ճշդումին տակ գործելու, ավելի իմաստուն գործ մը տեսած պիտի ըլլար նախ՝ քննելով և ստուգելով թե իրավայնե՞ք փաթեթներն լսված ձայնը Կոմիտաս վարդապետի ձայնն է, ի՞նչ տեսակ սրբազան երգեր են անոնք և վերջապես, այդպիսի արարքը դատապարտելի՞ք է թե ոչ: Առ այժմ Կրոնական ժողովը մեկ որոշումով երկու սխալ բրավո:

Նախ՝ դատապարտեց մարդ մը արարքի մը համար, զոր չէր գործած:

Երկրորդ՝ դատապարտելի վճռեց արարք մը, որով, հանցանք ըլլալը տակավին թեական է, եղեր, ըստ Ս. Պատրիարք Հոր հայտարարութեան:

Արդարեւ՝ Տիտոսի պես իրենց օրը չեն կորսնցուցած Կրոնական ժողովի անդամները:

Երվանդ Օտյան:

Ինչպես տեսնում ենք, Կրոնական ժողովն իր որոշումով իրոք իրեն ծիծաղելի վիճակի մէջ էր դրել: Խնդիրը, սակայն, մի պարզ թյուրիմացութեան մեջ չէ: «Տոնոգրաֆը» մի օղակն էր այն շղթայի, որի առաջին երկու օղակներն էին Կոմիտասի «Բուսան» երգչախմբի համերգի ծրագրի հոգևոր մասի արգելման և մամուլում հայկական ինքնուրույն երաժշտության բացասման նույնպես ձախողված փորձերը: Իսկ այդ շղթան մի քանի տարվա ընթացքում (1910—1914) նեղում էր Կոմիտասին, շեղում նրա ուղադրությունը, անհանգստացնում մեծ երաժշտագետին այն սամանակ, երբ նա հերոսական ջանքեր էր դնում և հենց ազգային ինքնուրույն երաժշտության միջոցներով կազմակերպում էր ժողովրդին, լուսավորում նրան, նպաստում նրա ազգային գիտակցության բարձրացմանը, փաստորեն ազգային ազատագրության մղում նրան: Տիրացուների անսկզբունք պայքարը Կոմիտասի դեմ կամա թե ակամա դառնում էր պայքար ժողովրդի դեմ, ժողովրդական գործի դեմ: Այդ պայքարում ազգային մտավորականության առաջադեմ ներկայացուցիչների աջակցությամբ Կոմիտասը միշտ հաղթող դուրս եկավ, իր նամականիքից մեկում նա գրում է՝ «Տիրացուների ատամները թափել են, էլ ոչ ուժ, ոչ անուն ունեն, իրենց դրածները խորտակումի պատճառ դարձավ»:


* * *

Սփյուռքահայ մամուլում տարբեր ժամանակներ տպագրվել է հայտնի բանահավաք Տիգրան Զիթունու «Կոմիտաս վարդապետ և մեր ժողովրդական երգերը» վերտառությամբ հետաքրքրական հոդվածաշարը: Այստեղ մանրամասն խոսվում է 1909 թ. էջմիածնում և 1914-ին Կ. Պոլսում Զիթունու երգածից Կոմիտասի կատարած ձայնագրությունների մասին: Զիթունին նշում է, որ Կոմիտասը չափազանց ուրախ էր այդ ձայնագրումների համար, քանի որ, ինչպես ինքն էր ասում, գտել էր «ոսկեհանք մը» հայ սքանչելի երգերու և «հարուստ հայկական ու բաղմաղան եղանակներու»: Զիթունին հիշում է նաև Կոմիտասի ձայնագրած մանկական երգերը. «Մեր նույնպես էր տալիս դանոնք տեսարակ-

ներով, գունավոր պատկերազարդ և եղանակները ձայնագրված, պատրաստ ծառայելու մեր մանկապարտեզուհիներու ձեռքին մեջ»:

Տիգրան Զիթունուց Կոմիտասի ձայնագրած 100-ից ավելի երգերից այժմ քիչ բան է հայտնի. երկու-երեք երգ պահպանվել են մշակված վիճակում, դրանց մեջ է «Հինգ էծ ունեմ» նշանավոր ծաղրերգը, «Սասմանց տուն» էպոսի երգերից մեկը միայն գտնվել է («էսօր հրազմ եմ տխեր...», հրապարակված է Ա. Շահվերդյանի «Հայ երաժշտության պատմության ակնարկներին» կցված նոտային օրինակներում): Հիշված հոգվածաշարում եղող վերնագրերի միջոցով անհրաժեշտ է այդ երգերը փնտրել, գտնել: Անհրաժեշտ է վերականգնել Զիթունու երգերի ամբողջությունը, որն իր անմիջական արժեքավորությունից բացի, մեկ վայրի (տվյալ դեպքում՝ Վասպուրականի) արտադրություն, և հետևաբար՝ մեկ միասնական ոճի արտահայտություն լինելով, գիտական առանձին նշանակություն կարող է ունենալ: Պետք է ենթադրել, որ այս տեսակետից նույնպես Զիթունու երգերը Կոմիտասին հետաքրքրած կլինեին, քանի որ նա դեռ վաղուց զբաղվում էր հայ ժողովրդական երգերի տեղային առանձնահատկություններն ուսումնասիրելով: Ավելացնենք, որ մանկական երգերի նկատմամբ Կոմիտասի հետաքրքրության այս դեպքը ևս եզակի չէր: Հայտնի են նրա կազմած «Հայ քնար միաձայն երգերի» տասնյակները, որ Կոմիտասը մտադիր էր տպագրել տալ հատկապես դպրոցական երգեցողության համար, այժմ գտնվել են նույնպես դպրոցական երգեցողության համար արված՝ ժողովրդական երգերի պարզ ներդաշնակումներ, կան այլ փաստեր ևս, որ խոսում են մանկական-դպրոցական երաժշտության նկատմամբ Կոմիտասի հանդես բերած տեական հետաքրքրության մասին:

Ինչ վերաբերում է Աղատյանի նյութերի մեջ գտնված մանկական երգին, ապա այն անմիջական կապ չունի Զիթունուց ձայնագրած երգերի հետ: Դա Կոմիտասի հորինածն է, մի գողտրիկ երգ ամենափոքրիկների համար, որ եվրոպական ձայնանիշների փոխադրած՝ հետևյալն է.



1. Տրոփ, տրոփ, տրոփ,
- Վա'զե, ձիուկ, հոպ.
- Բարեն վեր,
- Դարեն վեր,
- Ուրուն ձիուկ,
- Դեպի լեռ,
- Տրոփ, տրոփ, տրոփ,
- Հոպ, հոպ, հոպ.

2. Թա՛փ, թա՛փ, թա՛փ,
Գետեն անցիր ափ.
Մի՛ վազեր,
Մի՛ կոտորեր,
Կարմիր ձիուկ,
Իմ ոտներ.
Թա՛փ, թա՛փ, թա՛փ,
Ս՛փ, ա՛փ, ա՛փ:

3. Պոռ՛ւ, պոռ՛ւ, պոռ՛ւ,
Այժմ կեցիր դու
Ու արի
Կեր գարի,
Գիրուկ ձիուկ
Քաջարի.
Պոռ՛ւ, պոռ՛ւ, պոռ՛ւ,
Դո՛ւ, դո՛ւ, գո՛ւ:

* * *

Առանձին կոմենտարներ չի պահանջում Կոմիտասին գրված Վահան Մի-
րաքյանի նամակը, որ ցույց է տալիս ժողովրդական ստեղծագործությանը շա-
փազանց մոտիկ կանգնած և այն բարձր գնահատող այդ երկու արվեստագետ-
ների սրտագին ընկերական հարաբերությունը, նրանց դեմոկրատական գա-
ղափարների միասնությունը: Շնորհիվ հայտնաբերված նամակի, մենք նաև
ձեռք ենք բերում հայկական լավագույն ժողովրդական երգերից մեկի համե-
մատաբար լրիվ, ստույգ և ղրանով իսկ բարձրարժեք բանաստեղծական
տեքստը:

«Հայր սուրբ ջան,—գրում է Վ. Միրաքյանը Կոմիտասին,—

Միայն այժմ եմ հիշում, որ Դուք Բարեկենդանի տոներից առաջ ուզել էիք «Դիլե յամանը»
ներողություն, որ սկարգ մը խենթություններով զբաղված լինելու պատճառով անկարող եմ
Լիլի ուղարկել այդ գողտրիկ երգը, որի խորագիրն է «Եղնիկ»: Չգիտեմ՝ Դուք բառերի հետ և
եղանակն էիք ուզել, թե միայն խոսքերը, սակայն ես ուղարկում եմ բառերը, որովհետև եղա-
նակը ճշտությամբ ձայնագրելու ցանկալի ունակությունից զուրկ եմ. ատ, շտե, Չեդի քաջ
հայտնի է, ուստի կմեղադրեմ ոչ թե դիլ, կամ մեկ ուրիշն, այլ անպիտան Դալոյենց Վար-
դոն, որ... որ... Բայց ալ երկար ըրի, բավական է որչափ արյուն պղտորեցի, արյուն, զոր պի-
տո է հեղուլ ազգին համար... Ո՛հ, երկինք ու երկիր, ո՛հ, լուսին ու արև, ո՛հ, ազգ ու Հայրե-
նիք, Հայրենիք ու ազգ... ա՛խ, ա՛խ... կուզե՞ք հատ մը ատենաբանություն ընեմ Հայրենիքին
ու ազգին վրա... ո՛չ, շատ աղեկ, սկսեմ ուրեմն, ուստի արժան է սկսանել:

Ե Ղ Ն Ի Կ

Դիլե յաման,
Գյամին եկավ կրակի պես,
Վայլե, տնավեր,
Եկավ խասավ Սև ծովու կես,
Յաման, յաման,
Շորորա՛, եղնի՛կ, շորորա՛,
Քյո տուն չավրի՛,
Քյո դարդեն շատ մարդ կօրորա,
Յաման, րոյով
(կամ՝ յաման, յաման):

Դիլե յաման,
Արևն առավ Վանա ծովուն,
Վայլե, տնավեր,
Բալեն մեռավ քրդու ձեռուն,
Յաման, յաման,
Շորորա, եղնի՛կ, շորորա,
Քյո տուն չավրի՛,
Քյո դարդեն շատ մարդ կօրորա,
Յաման, սիրուն,
(կամ՝ յաման, յաման)։

Դիլե յաման,
Ուր կիրիշկեմ՝ մըժ ու դուման,
Ա՛խ, քյաֆուր ֆալադ,
Ո՛չ մի տեղից ճար ու գյուսան,
Յաման, յաման, յաման,
Շորորա, եղնի՛կ, շորորա,
Քյո տուն չավրի՛,
Ա՛խ, քյո դարդեն շատ մարդ կօրորա,
Յաման, Մարո՛,
(կամ՝ յաման, յաման)։

Ուրեմն, վերջին կրկնակները ամբողջանում են այսպես.

Տուման, բոյով, յաման, սիրուն, յաման, Մարո։

Շտե, ատ էր իմ դիտցածը, ախպար. եթե եղանակը գրի առնելու հարկ ըլլա, օր մը կգամ հող, ադ ալ Դուք կներ, ան ատեն ամեն բան կլմնա, կերթա։

Հայր սուրբ Քան, շատ ձանձրանում եմ, բայց մի կերպ քաշ եմ տալիս կյանքս, օրերը մթնացնում։ Շարադրությունս եթե սկսելու լինեմ (սպասում եմ ճեմարանից մի Հին Հայքի բարտեզի), երևի ժամանակն ավելի աննկատելի կանցնի։ Ինչ և է. սեղմում եմ Ձեր ճշմարտ աչքից տեսություն ասելով։

Ձեր Վահան

23 փետրվար, 1906։

«Դիլե յաման» կամ «Լե, լե, յաման» երգի նկատմամբ Կոմիտասի առանձին հետաքրքրության այս նոր փաստը կարևոր է։ Կոմիտասի նրկերի ժողովածուի Ա հատորում (1960) ղեկնակված այդ երգի մշակումը վերցրած է Կ. Պոլսի թուրքերեն հրատարակությունից (1935)։ Երգի մշակման բնագիրը չի հայտնաբերված, հայտնի էլ չէ, թե Պոլսի տպագրությունը ինչից է կատարված։ Այսպիսի պայմաններում ոմանք գտնում են, որ այդ մշակումը Կոմիտասին համարելը բավարար չափով հիմնավորված չէ (այդ ենթադրության համար առիթ է տալիս և այն, որ նույն «Դիլե յամանը» արտասահմանում հրատարակված կա նաև Կոմիտասի աշակերտ Վ. Սրվանձտյանի անունով)։ Այդ կարևոր հարցը լուծելու համար Վ. Միրաքյանի նամակը թերևս մի նշանակալից օժանդակ տվյալ կարող է համարվել։

* * *

Ինչպես հայտնի է, 1913-ի ամռանը Կոմիտասը եկավ Հայաստան։ Նրան ձգում էր և՛ հարազատ միջավայրի կարոտը, և՛ ընկերներին տեսնելու բուռն

յանկությունը: Անհիմն չէ ենթադրել, որ նա ցանկանում էր (պայմաններին ծանոթանալով, եթե հնարավոր գտներ) նորից Հայաստան տեղափոխվել. նա նույնիսկ սպասում էր, անշուշտ, բավականաչափ հիմք ունենալով դրա համար, համապատասխան հրավերի: Դեպի Հայաստան այս ուղևորության կարևոր նպատակներից մեկն էլ էջմիածնի մատենադարանում աշխատելը և գյուղերում ժողովրդական նոր երգեր հավաքել-ձայնագրելն էր:

Կոմիտասի 2-րդ «Ազգագրական ժողովածուում» (կազմող՝ Մ. Աղայան, Պետհրատ, 1950) տպագրված են այն երգերը, որ Կոմիտասը հավաքել է 1913-ի ամռանը Արևելյան Հայաստանի գավառներում: Միայն թե՛ սփյուռքահայ մամուլի տվյալներով այդ երգերը 70 հատ պետք է լինեին (դրանցից 20-ը պուսահայ կոմպոզիտոր Գոհարիկ Ղազարոսյանը ներդաշնակել է ձայնի և դաշնամուրի համար և հրատարակել), մինչդեռ Երևանում, Կոմիտասի արխիվում ստացված նրա ծոցատետրում միայն 60 երգ կար, որոնք և տպագրվեցին հիշյալ ժողովածուում: Ի՞նչ եղան հապա 10 երգը:

Թ. Ազատյանի արխիվը ստացվելուց հետո, այժմ հարցը լիովին պարզ է: «Պակասող» 10 երգը գրված է եղել առանձին, մի երկրորդ ծոցատետրում: Այդ ծոցատետրը Ազատյանը պահել է իր մոտ, 1-ին երգը պարունակող թերթն ուղարկել է «Բազմավեպի» խմբագրության, իսկ ծոցատետրը իր 9 թերթի վրա գրված 9 երգով այժմ գտնվում է Երևանում: Քանի որ այս երկրորդ ծոցատետրի մնացած էջերն ազատ են, պետք է ենթադրել, որ 70 երգով սահմանափակվում է 1913-ին Կոմիտասի ձայնագրածը:

1913-ի ձայնագրությունների հրատարակված հատվածը ժամանակին չրավել է երաժշտագետ Ա. Շահվերդյանի ուշադրությունը, բայց նա այդ երգերը բնորոշել է սոսկ որպես գիտական, այն էլ սահմանափակ արժեք ունեցող նյութ: Ըստ Շահվերդյանի, այդ 60 ձայնագրությունները պետք է դիտել որպես Արարատյան հովտում բնակվող գյուղացիների երգային մշակույթի ազգագրական մեկանգամյա հետազոտության արդյունք, որոնց մեջ, սակայն, երգային տեսակներն ու թեմատիկ բաժինները սահմանափակ են, թեև ժողովածուն գիտական ուսումնասիրության տեսակետից մի այլ առավելություն ունի՝ երգերի ռիթմական կառուցվածքը ճշգրիտ և մանրամասն է նշված⁵:


Ծիշտ է, որ Կոմիտասի այս ժողովածուն, ինչպես և մի քանի ուրիշները, իրենց գեղարվեստական և գիտական արժեքով չեն կարող համեմատվել նրա 1-ին «Ազգագրական ժողովածուի» հետ: Այդ 1-ին «Ազգագրական ժողովածուն» (հայերեն նոտագրությունից փոխադրեց եվրոպականի, առաջաբանով և դիտողություններով՝ Սպ. Մելիքյան, ՀՍԽՂ Պետհրատ, 1931) հայ գյուղական

⁵ Ա լ ե ր ս ա ն դ ր Շ ա հ վ եր դ յ ա ն, Կոմիտասը և հայ երաժշտական կուլտուրան (ոուսերեն լեզվով), Հայպետհրատ, 1956, էջ 118:

երգի հատընտիր է, երկար տարիների ընթացքում զոյացած, իրավացիորեն համարվում է անթուղիա, ներկայացնում է հայ գյուղական երգի դասական ժառանգությունը: Այդ ժողովածուի բարձրագույն արժեքն ընդունելով, պետք չէ, սակայն, թերազնահատել մյուսները: Մասնավորապես 1913-ի ժողովածուն դիտական և զեղարվեստական զգալի արժեք ունի: Այստեղ կան հուզական լարվածությամբ աչքի ընկնող, լայնածոր մեղեդիներ ունեցող, համեմատաբար ընդարձակ երգեր. հիշենք «Սարի աղջիկ» (№ 1), «Յար ջան, մերդ մեռել ա» (№ 27), «Զյունն եկել, դուռն առել ա» (№ 53) և այլն: Սրանք խոր զեղարվեստական ստեղծագործություններ են. առաջինն, ի դեպ, մի տարբերակն է հանրահայտ «Սարի գլալին» երգի, բայց նրա համեմատությամբ ինտոնացիոն տեսակետից ավելի հետաքրքիր է, ավելի հարազատ գյուղական երգի ոճին, ուր մական կառուցվածքի տեսակետից ավելի դինամիկ, շարժուն: Երրորդ երգն առանձնապես հետաքրքիր է իր լադային փոփոխականության շնորհիվ (մեղեդին պարունակում է աստիճան առ աստիճան իջնող երեք տարբեր լադային հենակետեր՝ տերցիային մաժոր, սեկունդային փուլոգիական մինոր, և հիմնական էռլա-դորիական մինոր), որը նրան հարուստ երանգավորություն է հաղորդում:

Մի շարք երգեր առանձին հետաքրքրություն ունեն շնորհիվ ուրիշական կառուցվածքի. դրանցից են, օրինակ, «Բաղլի պատը դդում էր» (№ 7) իր խառն չափով, որի մեջ շարունակ առաջ մղվող մեղեդիի շարժունությունը նպաստում է երգի հուզականության, նրա հոգեխռով տրամադրության խորացմանը (երգն ունի զինվորագրության հետ կապված թեմա), «Արևս ամպի տակ» (№ 69) երգն իր բազմաշափուլյամբ և այլն: Նշանակալից զեղեցկություններ են պարունակում հարսանեկաններից՝ հայտնի երգերի տարբերակներ ներկայացնող, թագավորի վերաբերող 4 երգերը: Այս ժողովածուում նույնիսկ կարճ պարերգերից շատերը զգալիորեն հետաքրքիր են, բավական է ասել, որ Կոմիտասը դրանցից մի քանիսը մշակել է: Այդ մշակումները, որ նոր են հայտնաբերվել և դեռ հրապարակված չեն, Կոմիտասի ստեղծագործության մեջ ժողովրդական երգի մշակման մի նոր ձև են երևան բերում՝ երգչախմբի համար գրված պարերգային բնույթի բազմամաս սյուիտ: Ընդհանուր առմամբ, 1913-ին Հայաստանում ձայնագրած 70 երգից առնվազն 12-ը (մինչև այժմ ուսումնասիրված նյութերից դատելով) Կոմիտասը մշակել է, որոնց մի մասը Պոլսում «Գուսան» երգչախումբը կատարել է: Մշակված երգերի մեջ են, պարերգային երկու սյուիտներից բացի, «Ալագյոզ աչերդ», «Բաղլի պատը դդում էր», «Սարեն եկավ երկու դռչ» և այլն: Այս փաստն ինքնին այդ երգերի զեղարվեստական արժեքի մասին է խոսում:

Այստեղ բերում ենք նոր գտնված երկրորդ ծոցատետրի բոլոր 10 երգերը՝ պահպանելով Կոմիտասի համարակալումը (№ 61-ը վերցրած է «Բազմավեպի» լուսանկարից), հայկականից եվրոպական ձայնագրության փոխադրած:



Մի բաժվի, հայրիկ, մի բաժվի,
Բաժվելու ես եմ:


Թոթակնի արծաթ ղրկեցե՛ք,
Բազմորին մատնի՞ք շինեցե՛ք,
Բազմորի անուն գրովեցե՛ք:

Կայնե՛լ ա իրիկվան փամին,
Ծովն ա կայնե՛լ գյամին,
Ղուրբան փղարի՞ք ջանին,-
Ընթ ընթի կանեն:

Ղազանֆար




Ղազանֆար





Սաւաթի գոգնոցը աթաւստիկ էր.
 Ղուկասի ըսպսեւել՝ կրթիկ սաստիկ էր:

Ղազաւֆար





Ղազաւֆար



Արեւն եկավ ու գնաց,
 Դեմ ավեց քարափ՝ յնաց.
 Մի օր ունեմ Ապարան,
 Բարեւ լըւովեց գնաց:

Ղազաւֆար



Քաջառնեւերն եկան զվորի զուգը |
 Շարից հետ զարման բաւերցի կուգը:
 Մաւերցա հանեց ոսկե մաւանին,
 Ինչ բուրգից գցեց հարուստ օմին:

Բարափից ընկավ լուսնակի շողօր,
 Փրկեւ զարվեր ընկավ կոտորակ հոլօ
 Փրկեւ զարվեր ընկեւ իսկ Կանեցի
 Գնաց աւերիս լուսը՝ Մնացի իւմար:

မိမိတို့

ՄՈԼԼԱՔԱՅԱԳԵՂԻ ՈՃՈՎ,
ԷԶՄԻՔՆԵԱ ԳՎԱՌ, ԷՐԼԱՆԵԱ ՆԱՀԱՆԳ.

Учредительное собрание

UCLA-PH-74-17

Умелая работа

407.4

№ 63 երգի տակ Կոմիտասը հետևյալ ծանոթությունն է գրել. «1913-ի գեպր Մազարչուղում, Շիրակում, երեք ընկեր սիրահարված են Սալաթին. վիճակ են ձգում՝ բաց վիճակ՝ հայտնելով յուրաքանչյուր նշանին համապատասխանող երիտասարդի անունը: Աղջիկը ընտրում է Ղուկասին, ընկերները նախանձից խաղ են սարքում: Իբր թե իրենց ընկերին հացկերույթ են սարքել, տանում են մարաբ և այնտեղ սպանում»:

Գեպրը պատահում է Շիրակի Մազարչուղ գյուղում 1913-ին»:

№ 66 երգի վերջին երկտողի «Թափիցք» տեղանունը Կոմիտասը բացատրել է՝ «Գյուղ Կողալ մոտ»:

* * *

Այսպիսով, Կոմիտասի 1913 թվականին ձայնագրած 70 երգերը, շնորհիվ Թորոս Աղատյանի, այժմ կան լրիվ վիճակում: Այսպիսի, հատ առ հատ, տասնյակ առ տասնյակ, երբեմն էլ միանգամից հարյուրակներով աստիճանաբար հայտնաբերվում են Կոմիտասի ձայնագրած և կորած հայ ժողովրդական երգերը: Գուցե մի օր էլ հայտնաբերված երգերի թիվը կհասնի նրանց սկզբնական փաստական քանակության՝ 4000-ին, ինչպես և կգտնվեն Կոմիտասի կորած բազմաթիվ այլ գործերը:

Роберт Атаян

КОМИТАСОВСКИЕ МАТЕРИАЛЫ В АРХИВЕ ТОРОСА АЗАТЯНА

Р е з ю м е

Известный литературно-общественный деятель и педагог Торос Азатян в течение долгих лет выступал за рубежом как преданный пропагандист творчества Комитаса. По поручению Константинопольской комитасовской комиссии с 1931 г. он занимался сбором затерянных материалов крупнейшего армянского композитора, в том же году составил и выпустил интересно написанную биографию Комитаса, а в 1939 г. составил и впервые издал (с критическим разбором) его лирические стихотворения.

Часть собранных материалов Азатян в свое время прислал в Ереван. Оставшиеся неопубликованные материалы после смерти Азатяна вместе с его богатым архивом тоже присланы в Ереван и ныне находятся в Музее литературы и искусства. Среди последних имеется ряд подлинников: черновая тетрадь стихотворений, содержание которой лишь частично охвачено в издании Азатяна; страничка из исследования древнеармянской нотописы; страница из учебника гармонии; записи армянскими нотами тага «Авик» и духовной песни «Амемат ко»; эскизы хоровой обработки народной песни «Эчмиацна ванки снер», детская песенка «Лошадка»; обработанный поэтический текст народной песни «Овн ануш» и блокнот народных песен 1913 г. Кроме этих подлинников Комитаса, имеется ряд переписанных и напечатанных в прессе материалов о нем, а также подлинник письма писателя Ваана Миракяна Комитасу, заключающий поэтический текст известной народной песни «Егник» («Диле яман»).

Перечисленные материалы ценны не только как реликвии, но и сами по себе, в отношении научном и художественном (в настоящей статье некоторые из них опубликованы и прокомментированы). Особую ценность представляет неизвестный блокнот с записью 10 народных песен, являющихся продолжением 60 песен, изданных в 1950 г. Эти 70 песен — последние записи, произведенные Комитасом на территории Армении. Они представляют народно-песенную культуру одной единой области Армении (Арагатской долины), отражают единый народно-песенный стиль этой области, и тем самым имеют (в особенности в нынешнем полном виде) специфическое научное значение. Помимо этого, они имеют и большую художественную ценность; в творческих материалах Комитаса найдены его неизвестные хоровые обработки, первоисточником для которых послужили записи именно из этого сборника.

Наследие Комитаса, разбросанное вместе с армянами «по всему свету», постепенно обнаруживается и концентрируется в архиве композитора. Хотя собрано уже немало материалов, но многое остается еще не выявленным. Поэтому любое, даже небольшое приобретение имеет большое значение. Выявление и сохранение данных материалов — значительная заслуга Тороса Азатяна.